

ՎԱՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Խաչակնքել՝ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ Ամեն:

1) Հաւատարմք Աղօթք

Կը հաւատամ Աստուծոյ, ամենակալ Հօր, Արարիչ երկնքի ու երկրի եւ իր միածին Որդւոյն մեր Տէր Յիսուս Քրիստոսին, որ մեր փրկութեան համար երկինքէն իջնելով, մարմնացաւ, մարդացաւ եւ Սուրբ Հոգիով ծնաւ կատարելապէս Սուրբ կոյս Մարեամէն: Չարչարեցաւ Պոնտացի Պիղատոսի օրով, խաչուեցաւ, մեռաւ եւ թաղուեցաւ: Երրորդ օրը մեռելներէն յարութիւն առաւ, երկինք համբարձաւ ու նստաւ Ամենակալ Հօր Աստուծոյ աջ կողմը: Ան, որուն Թագաւորութիւնը անվախճան է, դարձեալ պիտի գայ՝ դատելու ողջերն ու մեռելները:

Կը հաւատամ Սուրբ Հոգւոյն, ընդհանրական եւ Առաքելական Սուրբ եկեղեցւոյն, մէկ մկրտութեան շարժարտութեան, քաւութեան եւ մեղքերու թողութեան, մեռելներու յարութեան եւ յաւիտենական կեանքի: Ամեն:

2) Հա՛յր մեր

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո, եկեացէ արքայութիւն Քո, եղիցին կամք Քո՝ որպէս յերկինս եւ յերկրի:

Ձեաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումք մերոց պարտապանաց եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկէ ա զմեզ ի չարէն: Ձի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք, յաւիտեանս: Ամեն:

3) Ողջոյն քեզ Մարիամ


Ողջոյն քեզ Մարիամ. լի շնորհք Տէր ընդ քիզ. Օրհնեալ եւ դու ի կանայս եւ Օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Հիսուս: Սրբուհի Մարիամ, Մայր Աստուգոյ, բարեքնոսեա՛ վասն մեր մեղաւորացս, այժմ եւ ի ժամու մահուան մերոյ. Ամեն:

4) Փառք Հօր

Փառք Հօր եւ Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամեն:

Ով իմ Յիսուս

Ով իմ Յիսուս, ներէ մեզի մեր մեղքերը, բրկէ մեզ դժոխքի փռձերէն, բոլոր հոգիները երկինք արաչնորդէ, հատկապէս անոնք, վորոնք ամենէն շատ կարիք ունին քու վոթորմուղեանդ:



- 5,6,7,8,9) - Խորհուրդ (.....)
- Հա՛յր մեր (1), Ողջոյն քեզ Մարիամ (10)
- Փառք Հօր (1), Ով իմ Յիսուս (1)

10) Ողջոյն Սուրբ Թագոյի

Ողջո՛յն Սուրբ Թագուհի, Մայր ողորմութեան, մեր կեանքը, մեր քաղցրութիւնը եւ մեր յոյսը: Քեզ կը կանչենք, արտաքսուած իսեղճ զաւակներդ Եւայի, դեպի քեզ կը յղենք մեր հառաչանքները՝ ողբալով ու արտասուելով արցունքներու այս հովիտովն մեջ:

Ո՛վ ամենաողորմ Պաշտպան, մեզի դարձուր Քու ողորմութեանդ աչքերը եւ այս արքայութեան վերջ, ցոյց տուր մեզի Յիսուս՝ քու որովայնիդ Օրհնեալ պտուղը, ո՛վ գթասիրտ, ո՛վ բարեգութ, ո՛վ քաղցր Կոյս Մարիամ: Աղօթէ՛ մեզի համար ով Սուրբ Հոգի Աստուածածին, որպէսզի արժանի ըլլանք Քրիստոսի խոստումներուն: Ամեն:

ՈՒՐԱԽԱՆԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

(Երկուշաբթի – Շաբաթ)

1. Կ'ուրախանանք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ Գաբրիէլ Հրշտակապետը երեւցաւ քեզի եւ անտեց թէ Յիսուսի մայրը պիտի ըլլաս:
2. Կ'ուրախանանք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ այցելութեան գացիր քու ազգականիդ՝ Եղիսաբեթին:
3. Կ'ուրախանանք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ ծնար Աստուծոյ Որդին, Բեթղեհեմի քարայրին մէջ:
4. Կ'ուրախանանք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ ընծայեցիր Երուսաղէմի Տաճարին մէջ:
5. Կ'ուրախանանք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ երեք օր փնտրելէ ետք, գտար քու Որդիդ Երուսաղէմի Տաճարին մէջ:

ՏՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ


(Երեքշաբթի – Ուրբաթ)

1. Կը տրտմինք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ մեզի համար, արիւն գրտնեցաւ Գեթսեմանիի պարտեզին մէջ:
2. Կը տրտմինք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ մեզի համար, սինին վրայ ձաղկուեցաւ:
3. Կը տրտմինք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ մեզի համար, փուշով պսակուեցաւ:
4. Կը տրտմինք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ մեզի համար, խաչափայտը իր ուսերուն վրայ առաւ:
5. Կը տրտմինք քեզի հետ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ մեզի համար, խաչուեցաւ երկու աւազակներու միջեւ:

ՓԱՌԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐՆԵՐԸ

(Զորեքշաբթի – Կիրակի)

1. Կը փառաւորենք քեզ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ յարութիւն առաւ մերելներուն մէջէն:
2. Կը փառաւորենք քեզ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ քու Որդիդ երկինք համբարձաւ:
3. Կը փառաւորենք քեզ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ Սուրբ Հոգին՝ հրեղէն լեզուի նման, իջաւ առաքեալներուն վրայ:
4. Կը փառաւորենք քեզ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ երկինք վերափոխուեցար հոգւով եւ մարմնով:
5. Կը փառաւորենք քեզ, ով Կոյս Մարիամ, որովհետեւ փառքով պսակուեցար Ամենասուրբ Երրորդութենէն:



ԼՈՅՄԻ ԽՈՐՀՈՒՐՆԵՐԸ

(Հինգշաբթի)

1. Յիսուսի մկրտութիւնը Յորդանան գետին մէջ:
2. Յիսուս իր նշանը կուտայ Կանայի մէջ:
3. Յիսուս Աստուծոյ Թագաւորութեան գալուստը կը յայտարարէ մեզ դարցի կանչելով:
4. Յիսուսի պայծառակերպութիւնը:
5. Յիսուսի Սուրբ Հաղորդութեան կը հաստատէ:

“Ես Անարատ Յղացեալն եմ սկզբնական մեղքէն”:

**Սուրբ
Վարդարան**



Christ Orhniales

7657 Winnetka Ave. Ste. 236
Winnetka, Ca 91306
877-373-3781

Web: www.ChristOrhniales.org
eMail: christorhniales@gmail.com

